ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.22. Ճապոնիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները: Բնակչությունը

• • •

Այդ աղեղը գտնվում է Ասիա–խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի կենտրոնում և հսկայական դեր է խաղում համաշխարհային տնտեսության մեջ և աշխատանքի միջազգային բաժանման համակարգում: Ճապոնիան ծովային խոշոր տերություն է: Հյուսիսից Լապերուզի նեղուցով բաժանվում է Ռուսաստանից, արևմուտքում՝ Կորեական նեղուցով համանուն Կորեական թերակղզուց և Կորեայի հանրապետությունից: Արևելյան ափերը ողողում են Խաղաղ օվկիանոսի, իսկ արևմուտքից՝ Ճապոնական կամ Արևելյան, ինչպես նաև միջկղզային՝ Ներքին Ճապոնական ծովերի ջրերը: Աշխարհաքաղաքական առումով Ճապոնիան դեռևս ունի չլուծված հարցեր հարևան երկրների հետ՝ Չինաստանի, Հարավային Կորեայի, Ռուսաստանի: Վերջինից պահանջում է 1945 թ ԽՍՀՄ–ի կողմից գրավված Կուրիլյան կղզեխմբի հարավային չորս կղզիները՝ **Իտուրուպ**, **Կունաշիր**, **Շիկոտան**, Հաբոմայ:

• • •

Հյուսիսից հարավ մեծ ձգվածության պատճառով Ճապոնիան գտնվում է բարեխառն մերձարևադարձային, արևադարձային, գոտիներում և ունի բարեխառն մուսսոնային ու մերձարևադարձային մուսսոնային կլիմա: Տեղումների քանակը մեծ է, որի շնորհիվ ոռոգման կարիք գրեթե չի զգացվում: Ջրագրական ցանցը խիտ է: Գետերը կարճ են, ջրառատ, ունեն մեծ անկում և թեքություն, ինչի շնորհիվ մեծ է գետերի էներգետիկ նշանակությունը: Երկրի տարածքի շուրջ 3/4–ը անտառածածկ է: Չնայած Ճապոնիան դասվում է աշխարհի անտառածածկ երկրների շարքին, բայց այստեղ անտառներն արդյունաբերական նշանակություն գրեթե չունեն, ունեն առավելապես ռեկրեացիոն նշանակություն (ինչու՞):

Երկրի ընդերքում առկա են սև (երկաթաքար, մանգան), գունավոր (պղինձ, ցինկ), դժվարահալ (տիտան), ռադիոակտիվ (ուրան) մետաղների,

ածխի, կաոլինի (ճենապակու հումք) ոչ մեծ պաշարներ: Տնտեսության զարգացման համար հումքը գերազանցապես ներկրվում է:

• • •

Դրան նպաստել են նաև քաղաքաբնակների բաժնի աճը, մարդկանց բարեկեցության, կրթական ու մշակութային բարձր մակարդակը և այլն: Բնակչության թվաքանակի վրա ազդել են նաև պատերազմը՝ XX դարի պատերազմներում զոհվել է 2 մլն. ճապոնացի, արտագաղթը: Ներկայումս ցածր է մահացության ցուցանիշը, բարձր՝ կյանքի միջին տևողությունը՝ 82–86 տարի: Չափազանց բարձր է բնակչության միջին խտությունը՝ շուրջ 330 մարդ քառ. կմ: Նոսր է բնակեցված հյուսիսը՝ Հոկայդո անտառապատ կղզին՝ 65 մարդ քառ. կմ է: Խիտ են բնակեցված Հոնսյու կղզին, Սիկոկու և Կյուսյու կղզիների առափնյա գոտիները, որտեղ տեղաբաշխված են գրեթե միմյանց ձուլված բազմաթիվ խոշոր և մեծ քաղաքներ:

• • •

Առավոտյան 2,5 մլն մարդ շրջակա բնակավայրերից ժամանում է Տոկիո, երեկոյան՝ վերադառնում՝ կատարելով ճոճանակային միգրացիա: Մայրաքաղաքում սուր կերպով դրսևորվում են օդային ավազանի մաքրության պահպանման, տրանսպորտային «խցանումների», կառուցապատման համար անհրաժեշտ տարածքների անբավարարության (Տոկիոյի ծոցից արդեն նվաճվել է 1100 քառ. կմ տարածք), երկրաշարժից պաշտպանվելու և այլ հիմնախնդիրներ: Նախկինում կոչվում էր Էդո: 1869 թ–ից այն ճապոնիայի մայրաքաղաքն է, իսկ մինչ այդ եղել է **Կիոտոն**: Դա նույնն է ինչ Տոկիո, որը ճապոներենից թարգմանաբար նշանակում է արևելյան մայրաքաղաք: Նավահանգստային խոշոր քաղաքներ են **Յոկոհաման** և **Կոբեն**, **Օսական**, **Նագոյան**, **Կիոտոն** (կայսերական պալատով), **Սապպորոն** (ձմեռային օլիմպիադայի «մայրաքաղաք») և այլն:

• • •

Դարեր շարունակ ճապոնիան (միջնադարից կոչվել է **Նիպպոն** կամ **Նիհոն**) եղել է մեկուսացված: Օտարերկրացիների մուտքն արգելված է եղել: Մեկուսացված լինելն իր կնիքն է թողել մշակույթի և սովորույթների վրա, որով էլ ճապոնիան տարբերվում է այլ երկրներից: Ճապոնացիները կարգապահ, զուսպ ժողովուրդ են, նվիրված են իրենց երկրին, աշխատանքին, բնապաշտ են, ավանդապաշտ, խորը հարգանքով են վերաբերվում մեծե–

ին: Դիմացինին օգտակար լինելու համար իրենք են շնորհակալություն հայտնում:

• • •

Երկրի հարևանությամբ, ծովի հատակում տեղի են ունենում քարոլորտի սալերի տեղաշարժեր և խզումներ, որի արդյունքում ձևավորվել է ճապոնական փողրակը: Լեռնային ռելիեֆը, հաճախակի և ուժգին երկրաշարժերը (այդ թվում՝ ստորջրյա), ցունամին մեծ դժվարություններ են ստեղծում տրանսպորտային հաղորդակցության համար: Այն մասամբ հաղթավարվել է կամրջաշինության, տրանսպորտային թունելաշինության և օդային հաղորդակցության շնորհիվ: Հարթավայրերը նեղ և երկար շերտով ձգվում են ափամերձ գոտիներով: Համեմատաբար խոշոր է Հոնսյու կղզում գտնվող **Կանտո** հարթավայրը:

• • •

Ճապոնիայում քաղաք է համարվում 30 հազար և ավելի բնակիչ ունեցող բնակավայրը: Երկրում շատ են մեծ և միջին մեծության քաղաքները, որոնք արագ աճեցին 20-րդ դարի երկրորդ կեսին՝ արդյունաբերության բուռն զարգացմանը զուգընթաց: Ծովափնյա մասում քաղաքները ձգվում են Հոնսյու կղզու հյուսիսային երկու ափով մինչև **Կյուսյու** և **Սիկոկու** կղզիները ներառյալ՝ ձևավորելով քաղաքային ագլոմերացիաների կուտակումներ:

• • •

Ճապոնիայում ապրում է ավելի քան 125 մլն մարդ: Այդ ցուցանիշով այն դասվում է աշխարհի գերխոշոր պետությունների շարքին: Ճապոնիան աշխարհի ամենամիատարր ազգային կազմ ունեցող երկիրն է: Բնակչության ավելի քան 99%-ը ճապոնացիներ են, նրանք պատկանում են մոնղոլոիդ ռասային, բայց իրենց լեզվական առանձնահատկություններով չեն մտնում ոչ մի լեզվաընտանիքի մեջ: Ազգային փոքրամասնություն է Հոկայդո կղզում ապրող **այնու** ժողովուրդը՝ շուրջ 50 հազար մարդ: